

քունն (հայրենի ստացուածոց ներքե), որոյ եղանակին մէջ տարբերութիւն չկայ, վերջ տուաւ մեր այլախօս բարբառին:

Դ

ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ

Առաւօտուն կանուխ իջնալով վանքին սանդուխ ներէն և անցնելով մէջ ընդ մէջ կրկին պարըսպապատ բակերէ, մտայ աւանդատան դռնէն Աստուածամօր տաճարին դասուն մէջ. խուռն բազմութիւն եկեղեցւոյ մէջ ժողոված կը սպասէին. աւագ խորանը՝ որուն գոգաձևին մէջ զետեղուած է հրաշագործ պատկերը, ծածկուած կերպաս վարագոյրներու ներքե, բազում կերօններով բոցաւառ կը փայլէր: Զգեստաւորեալ քահանայ մի, երկայն գաւազանով բացաւ վարագոյրը. ցոլացին երեսք հրաշափառ կուսին, և բազմութիւն հաւատացելոց, 'ի դուճս անկեալ առաջի Տիրամօրս Հայոց, ուրախութեան և ցնծութեան երգով լցին տաճարը: Սոյն այս օրն համարեա թէ ամբողջ 'ի պատիւ պաշտաման Աստուածամօր նուիրուած էր: Պատարագք, ժամասացութիւնք, երգք, նուագք, թափօրք և քարոզք, մէկզմէկ կը յաջորդէին առաւօտէ մինչև երեկոյ. սակայն այս ամենայն պաշտամունք օտար լեզուով կը լինէր: Դասին մի անկիւն քաշուած, փափաքելի էր ինձ հասուցանել յունկն Տիրամօրս՝ ուխտս և իղձս, աղերս և պաղատանք, սակայն վրդովեալ խորհուրդքս զիս կը տազնապէին. մերթ տխուր և մերթ զուարթ